

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՈՎՍԷՍ ՔՅՆ. ԱՐԺԿԵՑԻ

(1440? — 1505?)

Մովսէս Արժկեցի որդին էր Դանիէլ Քաւանայի եւ Հայկաթունի: Մընած է չուրջ 1440-ին: Իրբեւ զալիր յիշուած է 1460-ին: Հայրը յայտնի գրիչ մըն էր, ինքն ալ հետեւեցաւ հօրը արուեստին եւ դարձաւ «քաջ քարտուղար»: Ունէր երկու որդիներ՝ Միքայէլ եւ Անանիա:

Գրչագրական իր աշխատանքներէն կրնանք յիշել հետեւեալները.

1.— Գանձարան, օրինակած եւ ծաղկած է 1472-ին, Արժկէ քաղաքին մէջ, ի վայելումն իր որդւոյն Միքայէլի.— Յիշտ. ԺԵ. Դարի, Բ. Մասն, էջ 331-332, Լ. Ս. Խաչիկեան:

2.— Յայմաւուրքի մը երկրորդ Հատորը, օրինակած է 1481-ին, Արժկէի մէջ, Մկրտիչ կրօնաւորի խնդրանքով.— Յիշտ. ԺԵ. Դարի, Գ. Մասն, թիւ 1:

3.— Շարական, օրինակած է 1482-ին, Թումայ կրօնաւորի համար.— Յիշտ. ԺԵ. Դարի, Գ. Մասն, թիւ 35:

4.— Ժողովածոյ—Տաղարան, օրինակած է 1485-ին, Ամիթի մէջ, «ի վայելումն համշիրքաբեղբօր աէր Յովանիսին», «առ ի յիշողութիւն անկեղծ սիրոյն».— Ձեռ. Երուսաղէմի, թիւ 1647:

5.— Ծառընտիր, օրինակած է 1491-ին, Արժկէի մէջ, գործակցութեամբ Յակօր զրչի, տանուտէր Խալիֆի խնդրանքով.— Ձեռ. Երեւանի, թիւ 4822:

6.— Մեկնութիւն Կաթողիկեայց Թղթոց՝ Սարգսի Շնորհալոյս, օրինակած է 1493-ին, Արժկէի մէջ, Խլաթայ Վարդան Եպիսկոպոսին համար.— Յիշտ. ԺԵ. Դարի, Գ. Մասն, թիւ 258:

7.— Աւետարան, օրինակած է, Արժկէի մէջ, 1501? Թուին, երբ «Վախճանական արարին ըզտէր Թախթին զԱլուանթին».— Յուցակ Ձեռագրաց Մուշ Դաղաքի, թիւ 21:

Մովսէս Արժկեցի գրած է նաեւ տաղաչափեալ մանր տարեգրութիւն մը, 1473-ին, պատմական հարուստ բովանդակութեամբ (1467-1473).— Յիշտ. ԺԵ. Դարի, Բ. Մասն, էջ 333-337:

Ձեռագիր Տաղարաններու մէջ կը գտնուի տաղ մը իր անունով, «Մարդասէր հայր...» սկզբնաւորութեամբ, եւ «Մովսէսի է երգ» ծայրանունով.— Ձեռ. Ս. Յ. թիւ 135, ՃԽԶ. թիւ 1521, ՃԽԶ. թիւ 1249, ՃՃԲ:

Ստորեւ կը ներկայացնենք այդ տաղը:

Մարդասէր Հայր զըթութեան
 խնամել զամենայն,
 որ զՈրդիդ քո սիրական
 ետուր մեզ փրկան:
 Որ ստեղծուածն նախնական
 զգերին զիւական,
 Հաներ ի փառս զերական
 յանկելոցն կայան:
 Վանիչ ստեղծարամեաւան
 Որդիդ կուսական,
 զծընունդ բոլոր ազամեան
 վերածեր ի կեանս:
 Սրբաբար Հոգւոց մարդկան
 սրբեա եւ ի ժաման,
 զնրնջեցեալ այս անարժան
 բառ մերոյ Հայցման:
 Էնդ Աստուած սաստիկ Հնչմամբ
 մաքրող վերնատանն,
 մաքրեա զՀոգիսն ամենայն
 որ ի քեզ ննջեան:
 Սրբոց զՊուրսըն նախնական
 եւ այժմ զաւազան,
 զՀոգիսն որ ի քէն ծընան
 միշտ պահեա անվան:
 Ի տաճարս քաւարան

Ժողովեալքս Համայն,
 ընդ ննջեցելոյս փրկութեան
 Հայցեմք միարան:
 փոխէ զճայնդ աստ.
 Էիդ ստեղծողի բնութեան
 զոչեմք միաձայն,
 վասն եղբորս մեր ննջման
 լրսել զփողոյն ձայն:
 Երկնից արքայիդ տեսեան
 իննել սմա արժան,
 խառնիլ ի դատն անդրանկեան
 յօրն աներեկեան:
 Բամից զուարթնոցն որ կան
 քեզ Տէր փառարան,
 պարակցի եւ առ նոցայն
 ի փառս անվախճան:
 Գրեալ մեղք սորա լրման
 բնաւ ջնջի Համայն,
 լրսէ զքաղցըր լուրըն զայն
 մուտ յուրախութեան:
 Սրբովրէից փառատրութեան
 կրցորդի սորայն,
 փառս երգել միշտ յաւիտեան
 Սուրբ Երրորդութեան:

Ն. ԱՐՔ. ՆՈՎԱԿԱՆ